

ՀԵՉԱԿ

ՀԱՐԱՐ ՍԵՍՈՒՆԻ



ՀԱՐԱՐՉՈՒՄ ՊՅՈՅԱՔԱՆ

ՀԱՐԱՐՉՈՒՄ ՊՅՈՅԱՔԱՆ

(Մ Ո Ւ Ր Ա Տ)

Նա, որին վիճակվեցաւ վերջը դառնալ Սասունի ամենայայտնի հերոսը, Սասունի ապստամբութեան առաջնորդը, Կիլիկիայի Հաճըն քաղաքի մի համեստ ընտանիքի զաւակ է։ Այն հանգամանքների ու դէպքերի շնորհով, որ ժամանակ առ ժամանակ տեղի էին ունենում Զէյթունում, սկսած՝ եօթանասուն թուականներից, Համբարձումի միտքը դեռ պատանի հասակից պատրաստում էին այն գործունէութեան համար, որի ասպարէզում ընկաւ նա հերոսաբար։ Ուսանող բժշկական դպրոցի Կ. Պոլսում՝ նա արդէն ջօրէն մտածում էր ծառայել իր ժողովրդին, բայց ոչ իր մասնագիտութեամբ, կամ գրական ու դպրոցական եւ կամ որ եւ է ուրիշ այգորինակ գործունէութեան։ Նա մտածում էր մէկ արքայական գործունէութեան գիմել, որով կարելի լի-

ներ բարենորոգել ժողովրդի վիճակն էական և ոչ կիսատ միջոցներով, պաշտիմներով, որոնց իսկ օրինական գործադրելու անհնարինութիւնը թիւրքական ըէֆիմի տակ՝ նրա համար արդէն պարզ էր դարձել ուրիշների փորձերից։ Հետաքրքրվող ու քննող խելք՝ նա միշտ իր տկոնքն էր սրում դէպի ամեն մի խօսք ու դատողութիւն, որ գրվում կամ ասվում էր ժողովրդի դրութեան եւ նրա պահանջների ու պէտքերի մասին։ Քիչ խստող և առհասարակ ծածկամիտ՝ նա դիտում էր իր շուրջն ամեն բան, ինչ վերաբերութիւն ունէր ժողովրդին։ Նրա գլուխը դարձել էր այդպիսի դիտողութիւնների մէկ ամբողջ գրադարան, որ նա ինքը շարունակ բրբրում էր, բայց սակաւ անգամ ներկայացնում ուրիշին։ Այդ «գրադարանը» որոշում էր նրա ընթացքը, նրա վերաբերութիւնը դէպի այս կամ այն անձը, դէպի այս կամ այն երեւոյթը կամ դէպքը։

Այդպիսի մանրակրկիտ աշխատութիւն, որ նա ունէր ուղեղում, ամենաբնարող յատկութիւնն էր կազ-

մում նաեւ նրա գործունէութեան ու ընթացքի մէջ: Ինչպէս մանրակրկիտ կերպով մեծ համբերութեամբ նա քննում ու փորում էր ամեն մի հարց և ամեն մի երեւոյթ, նոյնպէս նա մանրակրկիտ ջանքով անում էր այն բոլոր գործերը, որ իր բաժնին էին ընկնում: Եւ դեռ ուսանողական նստարանից նրա մէջ նկատուում էին ապագայ վերին աստիճանի ընդունակ կազմակերպող (organisateur) բոլոր անհրաժեշտ յատկութիւնները:

Մտքի այդպիսի յատկութիւններ և բնաւորութեան այդպիսի հակումներ ունեցող մէկն առհասարակ պատրաստ է անձնատուր լինել հէնց առաջին լուրջ պատահարին, որ նրան միջոց է տալիս աշխատելու ժողովրդի համար իր ձգտումների համաձայն: Արդարեւ, 1890թ., ուրիշ շատերի հետ միասին, որոնք վերջը գրեթէ բոլորն էլ դարձան յեղափոխական յայտնի գործիչներ — այսօր բանտերում փակված, — նա անդամ գրվեցաւ Հընչական կուսակցութեան, որ այդ ժամանակներն արդէն բաւական ճիւղաւորվել էր Հայաստանում: Նոյն թւին, խիստ կերպով խառն լինելով և Պոլսի անմոռանալի Ցոյցի մէջ, խուսափելու համար կառավարութիւնից, որ նրան փնտռում էր, նա պահպնեցաւ նոյն իսկ և Պոլսում մի տան մէջ: Ոստիկանութիւնն ամեն անկիւնում փնտռում էր նրան. նրա պատկերը մեծադիր դիրքով նկարված և կախված էր ոստիկանապետ Նազըմի ընդունարանում ոստիկանութեան մէջ, ուր նա ցոյց էր տրվում ամեն ձերբակալվածին թէ արդեօք չը գիտէ ուր է. իսկ լուսանկար պատկերը բազմաթիւ օրինակով բաժանված էր ոստիկաններին ու լրտեսներին, որ նրան գտնեն և նրա գլուխը գնահատված էր 2,000 ոսկի, որ պէտք է տրվէր այն մարդուն, ով մատնանիշ կանէր նրա թագստի տեղը կամ նրա անձը: Եւ այդ պարագաներում, այն էլ այնպիսի մի ժամանակ, երբ 7—8 հարիւր ձերբակալվածներով լքցվել էին և Պոլսի բանտերը և թագաւորում էին սպիտակ տէնօրը, կառավարութեան սարսափահար միջոցները, ամբողջ ամիսների ընթացքում Պոյաճեանն անխուժ կերպով շարունակում էր մնալ և Պոլսում, ի հարկէ, պահված և կատարում էր իր գործերն ու պարտականութիւնները:

Իժնչական դպրոցում, ի հարկէ, այլ եւս նա չէր յայտնվում, որ պէտք է նոյն ամիսներում տար իր վերջնական ընթացաւարտի քննութիւնը:

Պահված վիճակում երկար ժամանակ, պարզ է, նա չէր կարող մնալ և իր ընկերների ստիպումով, նա հարկադրվեցաւ փախչել և Պոլսից Եւրօպա: Գաղափարներով համոզված Հնչական արդէն և Պոլսում, Եւրօպայում մէկ ու կէս տարւայ ընթացքում նա պարզում է իրան այն բոլորը, ինչ տակաւին անորոշ էր մնացել իր մէջ գաղափարական տեսակէտից: Բայց նա իր բնաւորութեան յատկութիւններով կազմակերպական գործի մարդ է առաջնապէս: Նրան պէտք են անմիջա-

կան, շօշափելի գործեր ու աշխատութիւններ, դնալ, գալ, տեսնվել մէկի, միւսի հետ, անել գործնական կարգադրութիւններ կազմակերպութեան վերաբերեալ, մանեւ խմբերի մէջ, կանոնաւորել նրանց, բացատրել նրանց իրանց կաշտօններն ու գործառնութիւնները, լուսաբանել նրանց Հնչական գաղափարները, նպատակը, գործելու եղանակները: Այդ ներքին, կարելի է ասել, իր օրգանական պահանջի շնորհով Պոյաճեանն իր Եւրօպա ելած ամբողջ ժամանակամիջոցում անդադար ձգտում էր դէպի Հայաստան, ուր միայն կարող էր ստանալ գոհացում իր փափագին: Այդ տեսակէտից Հափազանց յիշեցնում էր իր եղբորը, Թիրայրին, որ 10 տարիից ի վեր իր յանդուգն գործունէութեամբ դարձել էր թիւրք կառավարութեան համար պատիժ: Թիրայրը, որ վերջին երեք տարւայ ընթացքում անդամ էր Հնչական կուսակցութեան, վերջն իր փոքր եղբոր պէս հանդիսացաւ հերոս Եօզկատի անցեալ տարւայ նշանաւոր կուռում և նոյնպէս ձերբակալվեցաւ: Առանց դատաստանի կառավարութիւնը մի քանի օրից յետոյ նրան կախաղան հանեց, ուր նա բարձրացաւ օրինակելի քաջութեամբ: Դա տեղի ունեցաւ Համբարձումի Սասունում ձերբակալվելուց, ընդամենը մէկ-երկու ամիս առաջ:

Որքան պաղարիւն, ահանդարտ սրտով էր գործում Համբարձումը երկրում, նոյնքան անհանգիստ և ստէպ վրդովված վիճակում էր գտնվում նա Եւրօպայում: Վերջապէս նա աջողեցաւ անցնել Հայաստանի սահմանը: Լինելով համեստ և իր անձն անյայտութեան մէջ պահող՝ նրա անունը սակայն արդէն յայտնի էր դարձել իր ընկերների շնորհով: Գործի մէջ նա միշտ չըջահայեաց, զգոյշ էր. երբեք չէր ընկնիլ ընդհանրական գրգռման տակ, թէկուզ ամենագրգռիչ հանգամանքներում, և հէնց իր այդ յատկութիւնն էր պատճառը, որ ամեն տեղ նա գործում էր աշխուրջ կերպով: աւելին չէր ասում ու անում եւ պակասն էլ միշտ աշխատում էր լրացնել: Յայտնի է, որ նա իր հանդարտ ու արթուն դատողութիւնը չը կորցրեց մինչեւ իսկ Սասունի պատերազմների ամենատաք միջոցին, թշնամու գնդակների տակ: Այն ժամանակ, երբ Սասունցիներն Անտօք լեռան վրայ յուսահատութեան մէջ մտածեցին, թէ թըշնամու կողմից առաջարկված հաշտութիւնն անկեղծ է, Պոյաճեանը մի ընդհանր չի ընդունեց իրանց կրիտիկական վիճակից, ուտեստի և ուղեւորութեան պաշարի հատնելուց, Սասունցիներին խորհուրդ է տալիս չիջնել թըշնամու բանակը, ուր նրանք վերջը պէտք է խողտողվէին չարաչար, և ինքն ամրանալու դիրքերը որոշելով, պաշար և օգնութիւն հասցնելու համար մի փոքրիկ խմբով անցնում է Տալուրիկի կողմերը, ուր կռիւլ նոյնքան տաք էր, որքան Անտօքի վրայ: Նա բռնվեցաւ հէնց այդ օրերը մի քարայրում, որտեղից երեք օր նա իր խմբով շարունակ պատերազմում էր թշնամու դէմ, մինչև որ

հաստան իրանց ուստելիքներն ու վառօթը և ձերբա-
կալվեցան: Դա տեղի ունեցաւ օգոստոս ամսին վերջերս:

Ժողովրդի մէջ նա ապրում էր իբրեւ մի պարզ
գիւղացի. նրանց պէս հագնւում, նրանց կերածն ու-
տում, նրանց հետ Սասունում ամբողջ մի տարի կը-
րում սովի, ցրտի եւ ամեն թշուառութիւնների տան-
ջաքները: Իր ձերբակալութիւնից մէկ-երկու ամիս ա-
ռաջ նա մեղ գրում էր Սասունի նիւթական վիճակի
մասին հետեւեալը. — «Հացի խնդիրն անտանելի է: Կե-
րածնիս կիկլի և կորեկի հաց է. ատկէ ալ շատերը
ղուրկ են. ցորենի հաց դեղի համար միայն կարելի է
փնտռել: Եթէ մէկը ալիւրէ հաց տայ վերջին աստիճան մեծ
պատիւ է. . . ևն. եւ այդ բոլորը նա տանում էր ոչ միայն
անտրտունջ կերպով այլ և իրանից զրկում և տալիս
էր գիւղացուն: Սասունցին նրան սիրում էր, պաշտում
էր. նրա ժրաջան, տոկուն, անաղմուկ, դադար չիմացող
աշխատութիւնները ժողովրդային դատի համար նոյն ո-
գով վարակում էր Սասունցիին: Դա ոչ միայն ըն-
կեր էր ժողովրդին, նա նրան եղբայր էր և իր կեն-
սական հանգամանքներով ու վիճակով չէր ուզում ոչ
մի տարբերութիւն ունենալ Սասունցիից: Դա պարզ էր
նրանց հետ, հակառակ ամեն մեծախօսութեան և իրան
սահմանած էր աւելի մեծ ֆիզիքական տքնութիւն,
քան ունէր Սասունցին: Հայկական յեղափոխութեան
ամենականաւոր անձերից մէկն է նա:

Այժմ նա երեսուն և հինգ տարեկան է:

Դա ձերբակալվեցաւ թշնամու գէմ հերոսաբար
կռւած միջոցին: Կառավարութեան ձեռքն ընկած այ-
սօր նա անփոխարինելի կորուստ է ժողովրդային դատի
համար եւ մասնաւորապէս Հնչակեան Կուսակցութեան
և մեզ, նրա ընկերների, համար: Ողբալով մեր անգին
ընկերի մեծ կորուստը, մենք սակայն միտնալուծում ենք
այն գիտակցութեամբ, որ նրա արած գործերը նոյնքան
մեծ են և աւելի — անմահ են:

Թ. Ղ. Թ. Ե. Կ. Յ. Ո. Ի. Թ. Ի. Դ. Ն. Ե. Ր.

ՆԱԽԱԿՆԵՐ ԹԻՒՐԷԵՆՏԵՑ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՍԵՍՈՒՆԻ

ԴԵՊԷՐԻ ՄԱՍԻՆ

Նրկար տարիներէ ի վեր մեր ըրած գուշակութիւն-
քննահա իրականացան. ահա Սասուն արեան մէջ ա-
հա Տարօն իր վերջին ճգնաժամի մէջ. ահա Սասնոյ
բարձրաբերձ լեռներու վրայ կը ծածանի յեղափոխական
կարմիր դրօշակն. ահա փոթորիկի յայտարար առաջին
շանթն կարձակի Սասնոյ լեռներէն. ահա Մուշ արեամբ

ներկուած, արիւնակալած աչքերով իր արիւնաթա-
թախ ձեռքերը կը մեկնէ դէպի մեր օտարաբնակ եւ
հայրենաբնակ եղբարց կարեկցութիւնն ու անմիջական
օգնութիւնն. . . . Արդարեւ կը շփոթիմք այլ եւս նկա-
րագրել եւ արտայայտել Մայր Հայաստանի մէջ տեղի
ունեցած արտասովոր անցքերը: Արդեօք հաղար ու մէկ
կնճռոտ անցքերէն ու պարագաներէն որո՞նք յիշատա-
կենք եւ որո՞նք զանց առնուիմք. զի ամբողջ վիճակն
ստուերագրել մեզ անկարելի կերեալ. . . Ինչ եւ իցէ,
կը թողուիմք հաղար եւ մի մանր-մունր անցքերը և որ-
պէս բու աւերակաց՝ կեղերերգեմք այն՝ աննկարագրելի
խժգոնութիւնը եւ դժոխքը բեր ոճիրներու գլխաւորագոյն
մասերը, որք հայութեան սրտի անբուժելի վէրքերն են
եւ կը մնան, եւ կոչում կընենք մեր հայրենաբնակ և
օտարաբնակ եղբարց, ոչ թէ այլ եւս յօգնութիւն ար-
եամբ ներկեալ Մշոյ եւ Սսնոյ, այլ ի վրէժ. . . Եթէ
գէթ լսելի չեղաւ վերջին չորս տարիների ընթացքի
մէջ Սասնոյ եւ Մշոյ անթի ու անզէն լինելու գոռու-
մըն ու գոչումը, ողբն ու աղաղակը, արդեօք ի՞նչ սիրտ
պիտի ունենայ այն հայն, եթէ այսօր ալ անտարբեր է.
արդեօք համբերութիւնը այլ եւս յանցանք չէ՞ եւ ան-
գործութիւնը դաւաճանութիւն: Կենք կատարելապէս հա-
մոզուած ենք, որ եթէ այս րոպէներն ալ կորսնցնենք,
մեզ կրտսեանայ յաւիտենական կորուստը. եթէ կորաւ
Սասնոյ եւ Մշոյ բաղդը իւր արեամբ ներկեալ դիակաց
ներքեւ, թող չը կորսուի գէթ հայութեան ապագան:
Եթէ կայ ժամանակ գործելու եւ գործակցելու — ահա
այսօր է. վայն կորսնցնելը՝ հայութեան ապագան, հայ
տարրը կորսնցնել է. դժացէք եւ գործակցեցէք մեղ
հետ, եղբարք. այժմ կամ երբ է ք:

Սասունն արեան մէջ: Արդէն տաճիկ կա-
ռավարութիւնը չորս տարիէ ի վեր կը ձգտեր Սասու-
նը ոռնակոխ ընել՝ եւ յարմար առիթ կը փնտռէր իւր
վայրագ կիրքն յագեցնել հայի արեամբ. արդէն 1893
թւի յունիս 17-ի պատերազմը *) թուրք և քուրդ
տարրի սրտի անբուժելի վէրքերն եղան, ուր ինկան հա-
րիւրաւոր քրդերն: Ղերջապէս մի կողմէ տաճիկ կառա-
վարութեան անտանելի վայրենութիւնըն եւ միւս կող-
մէ Սսնոյ եւ Մշոյ օղբ, անկեալ ու հարստահարեալ
վիճակը եւ այս ու այն խլրտուկները որոշեցին Սսնոյ
անմահութեան պսակն եւ Տարօնոյ վերջին ճգնաժամը. . .

Գարնան հետ վերստին ողջունեցին զմեզ հարստա-
հալութիւնը ու խժգոնութիւնը: Ինչպէս նախորդ թըղ-
թակցութիւններով **) միշտ գրած ենք, ժողովուրդը երեք
տարիէ ի վեր վերջին ճգնաժամի մէջ կը հեծէր. մի
կողմէ տաճիկ կառավարութեան վայրենութիւններէն եւ
միւս կողմէ անտանելի սովէն, եւ տաճիկ կառավարու-
թիւնը այս յարմար առիթ ձեռքէ չը փախցունելու
համար, գարնան բացուելուն պէս յատուկ արհեստաւոր-
ներ զրկեց Սսնոյ սիրտն ու հոգին՝ Տաւրիկի Սստա-
նայի կամուրջը նորոգելու, որով Սասունցին գու-
շակեց իւր օրհանգստի եւ անխուսափելի վտանգն: Ի
ժողով գումարուելով Տաւրիկի Հարթ թաթ թաղի խա-
չօեան Գասպարի տունն, վերջապէս այն եզրա-

*) Տես «Հնչակ» NNrs 8 և 9-ը, 1894 թ.

**) Տես «Հնչակ»-ի 1834-րդ տարեշրջանի բոլոր
համարներում «Տարօնոյ Տեղեկագիր»:

կացութեան յանգեցան, որ լաւ է մեռնիլ պատուով եւ զոհուիլ ժողովրդի շահերի համար, քան լինել ստրուկ այն կառավարութեան, որ վաղ թէ անազան պիտի կոխտէ եւ ոչնչացնէ զմեզ: Զարմանալի էր տեսնել այդ կոշտ եւ անկիրթ Սասունցւոց տաք վիճաբանութիւնը ընդհանրական շահերու նկատմամբ: Աստ գումարուած էին Տալուրիկի ինն թաղերու գլխաւորներն. Հ ա Ր Թ Բ Ի Խ ա շ օ Ե ա ն Գ ա ս պ ա Ր, Յ օ ս ն ու տ ի՝ Գ ա մ է- Ե ա ն Հ ա մ զ է ն, Փ ու ր խ ի՝ տ Գ ա բ Ր ի է Լ ա- ր ի ա հ ո չ ա կ ք ա հ ա ն յ ն, Տ ա լ ու Ր ի կ հ ամանուն թաղի, Զ օ ու Ե ա ն Պ Ե ա Ր օ ս, Հ Լ ո զ ի ն ք ի՝ Հ ա մ զ է- Ե ա ն Ա Ր Թ է ն, Հ ա գ մ ա ն ք ի՝ Բ օ Լ օ Ե ա ն Գ ա ս- պ ա Ր եւ Մ կ Ր է երկու հղբարք, Գ ու ա լ ի ն ք ի՝ Գ ա ս պ ա Ր, Ս պ Ղ ա ն ք ի՝ Խ ա շ օ եւ Մ ա կ ա Ր եր- կու եղբարք, Ե Ղ կ ա Ր Գ ի՝ Մ ա կ ա Ր: Գոյա մէջէն Զօռօեան Պետրոս ոչեւորուած սրտով նկարագրելով ի- րենց նիւթական եւ ուղղական բնաւ պաշար չունենա- լը կը գողար. «Մեռնի՛նք եւ ազատուինք այս կեանքէն: Մ ա հ ն է մեր բաժինը: Եւ իրենց այս վերջնական ո- րոշումը յատուկ պատուիրակաւ տեղեկացուցին Վ Է Լ ի- կ ու զ ա ն ի, Շ է ն ի ք ի եւ Ս է մ ա Լ ի գործակից եղ- բարք: Սորա եւս ի ժողով գումարուեցան Վ Է Լ ի կ ու զ ա ն ի մէջ, ուր ներկայ էին Շ է ն ի ք ի 25 տարեկան աղնիւ եւ քաջ երիտասարդ Բ է յ ս Գ Ր Գ օ ն, Գ ո Ր ք է Ե ա ն Ս ա- ք օ ն, Ս է մ ա Լ ի տ. Յ ո Վ Տ ա ն ն է ս ք ա հ ա ն ա ն, Վ ա ծ ո Ե ա ն Շ ա ո օ ն, Ա Լ ի ա ն ց ի ք ի Պ օ Ղ օ ս ե Ա ս օ, Վ Է Լ ի է կ ու զ ա ն ի Բ է յ ս Պ Ե ա թ օ, տ. Ղ ա- զ ա Ր Ե ա ն տ. Պ Ե ա Ր օ ս նորընծան, Ն ի կ օ Ե ա ն Օ- հ ա ն եւ տ. Բ ա ջ ք ա հ ա ն ա ն: Իրենց վիճակի վրայ շատ մը քննադատութիւններ ընելէ վերջ, միահամուռ գողացին. «Մ ա հ ը նդ ընկերաց հարսանիք էր, եւ սի- րով պատասխանելով, յայտնեցին Տալուրիկի եղբարք ի միասին ապրել կամ մեռնիլ: Երբ վերջիններու սիրոյ եւ անկեղծութեան խորհուրդներն եւս հասան ի Տալ- ւորիկ, անմիջապէս որոշեցին խումբ մը յարձակել Ս ա- տ ա ն ա յ ի կամուրջ շինողներու եւ անդ հսկող 17 զօրաց վրայ: Յարձակման ժամանակ կուշ մէջ ինկան զօրաց 7 հոգի. միւսները փախչելով ի Մուշ տեղե- կութիւն տուին կառավարութեան: Վերջինս այդ պատեհ առիթը չը կորսնցնելով հրաւեր կարգաց քուրդ աշի- րէթներուն եւ յատուկ պատուիրակ ղրկելով Զ ի լ ա ն- ց ի Շ է յ ի Մ է հ մ է տ ի ն, որոյ անունն ու պատին անցեալ տարուայ պատերազմէն ի վեր աւելի բարձր- ացած էր, հրահանգեց յարձակել Տալուրիկի եւ շրջ- ղակայից վրայ: Քուրդ աշիրէթները 1893 թւի պա- տերազմէն լաւ խրատուած լինելով՝ չէին յամար- ձակեր յայտնի արշաւել Սասնոյ առիւծներու վրայ եւ սկսան աւազակային յարձակումներ գործելով՝ աւարի առնուլ այն ոչխարաց գոմերն ու տները, որք առան- ձին շինութիւն էին: Հայերը կը փոխանակեն. քուրդք սարսափած յետս կը մղուին: Այս առաջին յարձակողա- կան դրից մէջ նշանաւորագոյն է Ս է մ ա Լ ի եւ Շ է- ն ի ք ի դէպքը, որը սկիզբ դրեց Սասնոյ մեծ կռիւնե- րուն եւ ներկայ վիճակի: Ո Լ ի Գ ց ի Թ իւրք ցեղը, որ Մշոյ քաղաքի մէջ կը բնակի եւ քրդական սովորութեան համեմատ գարնան բացուելուն պէս Մշոյ Ս ի մ սարի վրայ կը բարձրանայ վրանաբնակ քուրդ աշիրէթներու պէս, եւս անմասն չը մնալու հայերի աւարէն, կապուտ

ու կողոպուտէն, յարձակեց յուլիս 27-ին Շ է ն ի ք ի եւ Ս է մ ա Լ ի վրայ: Գիւղերէն բաւական հեռու գտնելով նո- ցա ոչխար տաւարները, կը քշեն կը տանին: Հովիւնե- րը վազելով դէպի գեղեր հաւար կը ձգեն: Առանց ժամանակ կորսնցնելու Շ է ն ի ք ի Բ է յ ս Գ Ր Գ օ ն եւ Ս է մ ա- լ ա յ տ. Յ ո Վ Տ ա ն ն է սը՝ զինեալ երիտասարդաց առջեւ ին- կած՝ ետեւներէն կիշնան եւ նոցա վրաններու առջեւ հասնելով կըսկսի ահալ կռիւ մը: Հրացանները կորո- տան երթալով՝ թրքաց բազմութիւնը կըստուարանայ. վերջապէս Սասունի որջերէն դուրս ելած առիւծները կը յառաջանան: Քիւրդը եւ թիւրքը կը յաղթուին. թշնամին 34 դիակ թողած պատերազմի դաշտի վրայ կորագլուխ ի փախուստ կը դառնայ: Հայոց կողմէ կիշ- նան Յ ա կ ո Ր եւ Վ Ր պ է անուն երիտասարդներն, Հայք կը յարձակին եւ սլով կտրատելով քրդաց վրաններն աւարի կառնուն քրդաց բոլոր գոյքն, ոչխարն ու տա-ւարը եւ երկու նահատակաց մարմինն առնելով՝ յետս կը վերադառնան մեծ աւարով... Թէեւ Ս է մ ա Լ ի 1893-ի յունիսի 1-ին, յայտնի Հնչակեան գործիչ Մ ի հ Ր ա ն Տ ա- մատեանի ձերբակալման առթիւ, թուրքութեամբ եւ վա- տութեամբ իրենց անունն աղտոտեցին, բայց այս տարի առաջին զօհն տալով՝ մաքրեցին այդ վատութեան աղ- տըն եւ արեամբ պսակեցին իրենց հոյն ու ջուրը, հո- վիան ու ձորն, թողլով հայութեան սրտի համար ան- բուժելի վէրք...

Իբրեւ կառավարութեան ականջը հասաւ Շ է ն ի ք իցոց եւ Ս է մ ա Լ իցոց քաջութեան լուրն, այլ եւս իր բոլոր ոյ- ժը թափեց Սասնոյ նոթի ու ծարաւ, մերկ ու քաղցած ափ մը ժողովրդեան վրայ: Թող աննէ քաղաքակիրթ Եւրոպան, թէ ինչպէս տաճիկ կառավարութիւնը հե- ոագիր հեռագրի վրայ տալով՝ շրջակայ կուսակալու- թեանց զօրքերը ի Մուշ կը ժողովէ եւ այդ ոյժն բա-ւական չի համարելով՝ հրաւեր կը կարդայ Հ ա մ ի- տ ի է հեծեալագնդին եւ քուրդ մոլեռանդ ժողովրդին, տալով նոցա կանոնաւոր զէնք եւ ուղղակիութիւն: Աստ իւր կրօնական մոլեռանդութեամբ ամենաառաջինն հան- դիսացաւ Զիլանայ շէյխ Մ է հ մ է տ լ, որ հազարա-ւոր խառնիճաղանձ քրդաց բազմութիւնն ի մի հաւա- քելով բարձր կտուրի վրայ կանգնած կը քարոզէր. «Քրիստոնէի մը կիւնն ու աղջիկը առեւանգել արդա- ռութիւն է, նոցա եկեղեցիներ քանդելով ու այրելով՝ աստուածային գործ մը կատարել է. ձեռ թափած ար- եան կաթիլներու չափ հիւրի (յաւերժահարսն) պիտի առնէք Աստուծոյ ճէննէթի մէջ եւ այլն»:

()գտնու 1-ին այդ խառնիճաղանձ բազմութիւնը, ուխտելով շէյխի եւ Մուհամմէտի անուան վրայ, սկսեց քալել դէպի Սասուն: Այս ու այն կողմէ լրարեւրները հասնելով՝ կը պատմեն թուրք եւ քուրդ զօրաց ան- համար բազմութեամբ գալն: Սասունցիք նկատելով ի- րենց անխուսափելի վտանգն, Տալուրիկից ամրացան ի Ֆ Ր Փ Ր ա ք ա Ր: Արեւելեան կողմէ եկող Խ ա Ր զ ա ն ց ի Պ է Լ է ք ց ի, Բ ա գ Ր ա ն ց ի, Զ ի Լ ա ն ց ի, Ռ ա շ- գ օ տ ա ն ց ի, Շ է յ ի տ օ տ ա ն ց ի, Խ ի ա ն ց ի, Ճ է- լ ա Լ ց ի եւ մինչեւ Հալէպի կողմերի քուրդ աշիրէթ- ները հասնելով՝ Տալուրիկը կը շրջապատեն: Այդ ժա- մանակ Մուշ գումարուած կանոնաւոր 12,000 զօրքն, ինչի Մ ու ա թ ա Փ ա փաշայի եւ Բ ա ղ է չ ի Վ ու ս ա- կ ա Լ ի առաջնորդութեամբ շատ մը թնդանութներով

րիսասարգներէն էին: Արամ կանգնած քարաժայռի վերայ որոտացնելով ահեղ բերդական կը գոռար.— «Թաւը, նախատինք ձեզ, որ հայի առջեւէն կը փախչիք. ինչ էք կեցեր, փախէք Արաբստան. ապա թէ ոչ Սասունցիք ունեն ձեզ համար տաք գնդակներ»: Թշնամիք տեսնելով սոցա անդրդուելի քաջութիւնն եւ գերբնական տոկունութիւնն, կը դիմեն կանոնաւոր զօրաց հրամանատարին ըսելով. «անկարելի է սոցա յաղթել սոցա հետ կայ գերբնական զօրութիւն մը որ անխնայ կը ջարդէ Մուհամմէտի զաւակները. արձակէ զմեզ, ապա թէ ոչ այսուհետեւ մենք իրարու դէմ կը կռուինք»: Տաճիկ հրամանատարը շուարած մնալով կը դիմէ սովորական խաբեբայութեանց. հաշտութեան դրօշակ կը բանայ եւ պատգամաւոր ղրկելով հայերուն, բանակցութեան կը հրաւիրէ, խոստանալով բոլոր միասնները կառավարութեան գանձէն տուած: Հակառակ Մուհամմէտի եւ Գրգօի աֆէն համոզմանց ու խնդրանաց, վերջապէս գոռող Սասունցի առիւծները կը զիջանին հացի եւ ռազմավթերի չգոյութեան առջեւ: Կընտրուին 160 երիտասարդներ եւ տ. Յովհաննէսի, տ. Պետրոսի, Սագօի եւն գլխաւորաց առաջնորդութեամբ իրենց ամուր գիրքէն վայր կիջնեն Անտօքի ըստորոտը: Անմիջապէս պատերազմի փողը կը հնչէ թիւրքերու կողմէն եւ չորս կողմէ կորոտան թնդանօթներ, հրացաններ: Հայք կիմանան լարուած որոգայթը, բայց առանց շուարելու այդ վերջին ճգնաժամի մէջ կընկնին նաջախով, խանջարով եւ սրով կռուիլ. իրենց դիակները լեռնանման կը բարդուին միմեանց վրայ. չարաչար կը խողովողուն ամենքն ալ: Բայց այդ 160 երիտասարդներն իրենց արեամբ պահուեցան, անմահութեան գրօշմը կնքելով իրենց ճակատներու վրայ՝ խառն թըշնամեաց դիակաց հետ նորա քաղցրիկ կը ննջեն: Աստիճանական գոյնի քաջութեամբ Արամ, Գեւօ, Կըրպօն գիւցազն պատանիք. նոյնպէս նշանաւոր հանդիսացաւ տ. Ղազարեան տ. Պետրոս նորընծան, որն անցեալ տարւայ Տալօրիկի պատերազմի ժամանակ Հարթթ թաղի Գասպարի տան մէջ մեծ քաջագործութիւն ըրաւ, այսօր ալ այդ օրհասական վայրկեանի մէջ եօթ քուրդ սպաննելով եւ նոցա արեամբ լուալով ձեռքերը, գոռաց. «Այսուհետեւ թող հանդիստ մեռնիմ»: Թշնամույ ռազարութենէն չը վերաբացաւ այդ նոր Ղեւոնդը եւ միւս գլխաւորները, որք ողջ-ողջ ձերբակալելով տ. Պետրոսը գլխէն մինչեւ գօտէկապ քերթելով նորա միսն կտոր-կտոր ընելով՝ կրակի վրայ կեփեն, որոյ ձենձերն ու հոտն կը բարձրանայ. բայց նոր Ղեւոնդը լուռ ու մուկ կը տակայ եւ սոսկալի տանջանքների մէջ կաւանդէ հոգին: Սէմայի տ. Յովհաննէսի աչքերը հանելով՝ կը հրամայեն պար խաղալ. նա «Օրհնեա անձն իմ զՏէր» ըսելով կը պարէ: Շէնիքի տ. Տօնապետ եւ Տալօրիկի Փոլը թաղի արիահռչակ տ. Գաբրիէլ քահանաները անկարագրելի տանջանքներով թշնամեաց մէջ կաւանդեն իրենց հոգիք, թողնով անմահ անուն: Մուհամմէտ եւ Գրգօն իրենց քաջերով վերէն ականատես կըլլան այս աղէխարշ տեսարանին, բայց անոնց անհնարին կը լինի անպաշտպան թողուլ այդչափ մատաղերամ մանկունք ու կանայք եւ հասնել իրենց եղբարց փառաց: Այդ մեծ ու սարսափելի կո-

րուստները եւ անտանելի նօթութիւնը սարսափահար ընելով՝ հայոց մի մասը գիշերանց կը փախի եւ իրան կը ձգէ Տալօրիկի գիրկը: Սակայն Գրգօն ուխտելով կը գոռար. «պիտի մեռնիմ իմ հողի եւ եղբարց վրայ եւ չը պիտի վատութեամբ հեռանամ»: Այդպիսի անդրդուելի քաջութեամբ վեց օր շարունակ քարով ու սրով պատերազմելով՝ վերջապէս այդ ամեհի առիւծը կը զիջանի սովի առջեւ եւ տեղույ պաշտպանութիւնը թողնով կանանց, կոյս աղջկանց եւ սակաւաթիւ արեւու, ինքն իր քաջերով կորոշէ երթալ Խուլբի եւ Խիանի հայ գեղեր հաց եւ ռազմավթերը հասցնելու եւ կանցնի Անտօքէն ի Հեղին գիւղ: Հետեւեալ օրը թշնամին իր վերջին ուժը գումարելով, սկսեց յառաջ քալել: Թշնամին անհամար բազմութիւն էր. հայ կանայք ու աղջկունք բռնած իրենց փոքր եղբարց ձեռքերը եւ մանր մանուկները կապած կանակնուն կը կըռուէին: Հափսէ անուն ծերունի կինը կը պօռայ. «քոյրեր, վատութեամբ չաղտրտեմք Սասունցւոյ անունը... եւ անդադար 24 ժամ կռուելով՝ վերջապէս թշնամին երթալով կստուարանայ: Սասունցի կանայք եւ սակաւ կտրիճներ անօգնական, քաղցած, ուժասպառ տեղի կուտան: Այդ ժամանակ կըսկսի անկարագրելի կտորած, փախուստ. երախայոց ձիւն ու լացն երկինք կը բարձրանան... Վերջապէս հայերը կը հասնին Կէփէի քարոտ գագաթը, եւ կը տեսնեն որ չորս կողմէ պաշարուած են: Այս վերջին ճգնաժամի մէջ Գրգօն նորահարս կինը Շաքէ օրինակելի քաջութեամբ եւ գերբնական առաքինութեամբ, երբ աչքը այս ու այն կողմը դարձնելով կը տեսնէ թշնամույ անհամար բազմութիւնը, կըզգայ որ այլ եւս անհնար է ազատուիլ: Նա կը բարձրանայ քարաժայռի մը վրայ եւ միամեայ երախան գրկած թեւերու վրայ, կը կանչէ. «քոյրերս, մեղ երկու ծանապարհ մնաց. կամ մեռնիլ եւ չը մոռնալ մեր երկիրը, պատիւը, ամուսինքը, եղբարքը եւ կամ քարերէն վար ձգելով զմեզ՝ չիյնամք Մուհամմէտի զաւակաց պիղծ ձեռքերու մէջ...»: Այսպէս գոչելով եւ աչքերն զէպի երկինք բարձրացնելով կը նետուի խոր անդունդի մէջ: Կարծես այդ հերոսուհւոյ ձայնն դեռ կը հնչէ իր քոյրերու ականջին. միւսները ոգեւորուած նորա օրինակին հետեւեցան եւ անմեղ ու ապերջանիկ մանուկներն իրենց մայրերու օրինակին հետեւեցան անգիտակից իրենց վիճակէն... Թշնամին տեսաւ այդ անմեղ զոհերու օղի մէջ ձոճալը եւ յետոս ընկրկեցաւ, ապշեցաւ... Շուտով ձորը լեցնուեցաւ եւ վերջինները իրենց ընկերուհիներու վրայ կէս ողջ մնացին: Թշնամիք հասնելով բազմաթիւ կանայք եւ կոյս աղջկունք եւ մանր մանուկներ գտնելով՝ ձերբակալեցին: Աստ եւս մտրակ, խարազան եւ շիկակարմիր շող շամիւր իրենց մահաբոցը պաշտօնը կը վարեն: Այլ եւս բռնաբարութիւնը կանանց, նոցա ողջ-ողջ անդամահատութիւնը անկարագրելի է... Տեղեկութիւններ կը հարցնեն Մուրատի, Գրգօի եւ Տալօրիկի վրայ, սակայն անկարելի կը լինի բառ մը կորզել այդ կենդանի նահատակներէն: Անտօք, Կէփէ եւ շրջակայ լեռն ու քարն, հովիտն ու ձորն դիակներով ծածկուած էին, անթաղ դիակներ թռչուններու կերակուր դարձած էին: Բայց դեռ Տալօրիկը կորոտար, հրացանները երբեմն այս ու այն կողմ դարձունելով կարծես հրաւեր կը կարգար ա-

մեն հայ եղբայր հասնիլ մասնակցիլ օրհնել։ Այդ դժ-
բաղդ զոհերու հետ կարծես կոպուած էր դիւցազն Գր-
գօի եւ իր քաջաց քաղզն եւս։ Երբ նորա Հեղէն
գեղէն դուրս գալով բարձրացան Հեղինու սար։ Մե-
կէ տրէժ (երկայն արօտամարգ) կոչուած տեղը պա-
տահեցան քուրդ յահագին բազմութեան մը։ Հայք ա-
նօթի, ուժասպառ կըսկսին կռուիլ անթիւ զօհեր տալէ
վերջ դիւցազն Գրգօն եւս վերաւոր՝ ուշաթափ գետին
կիյնայ։ Քուրդը ճանչնալով նորա դիակը, ուշաթափ վի-
ճակի մէջ կը բերեն Երզնկայի բանակազօրի հրամա-
նատար Զէքի փաշայի առջեւ։ Երբ Գրգօն առաջին ան-
գամ կըսթափի հաց կուզէ կարծելով թէ դեռ իր քա-
ջերու մէջ կը գտնուի։ Բայց փոքր ինչ մտածելով
կը տեսնէ զօրաց բազմութիւնն և ինքնիւրեն կըսէ։ «Գր-
գօ, ամօթ չէ որ դու ալ դերի բռնուիս, դէհ մեռի՞ր,
եւ ելնելով ու վազելով տեղէն ոստիկանէ մը հօացանը
կը խէ եւ կը յարձակի դէպի հրամանատար փաշան։
Սակայն կորոտան հօացաններ, կը շաշեն սուրեր եւ դիւ-
ցազնը անշնչացած գետին կը փռուի։ . . . Թշնամիք Շէ-
նիք, Սէմալ, Ալի անցիք, Ալի էկուզան,
Ալքի, Ալի էկուզան, Գեղաշէն, Շուշ-
նամբէկ, Բօթ, Ալքիմալ եւ Իօրիցանք այ-
րելով իրենց եկեղեցիներով հանդերձ՝ բոլորովին բար-
ուբանդ ընելէ վերջ՝ կըսկսին հետամուտ լինել լեռ-
ներու մէջ, թէ ողջ մնացած մը գտնուի՝ ոչնչացնեն։ Այդ
պահուն քարայրի մը մէջ պատահելով Մուրատին եւ
իւր ընկերներուն։ Կը յարձակին, հօացաններ կարձակեն,
բայց հայք քանի մը օր քաջաբար կը պաշտպանուին
վերջապէս ուտեստի պաշտը եւ վառօդը հատնելով նո-
քա կը լռեն։ այդ ժամանակ թուրքերը ծուխ կը թողուն
քարայրի ներսը եւ այդպիսով կարողին բռնել Մուրա-
տին եւ իւր ընկերները։ . . . Ապա աւելի կառաջանան եւ
կը պատահին Ալիէկուզանցի նշանաւոր Բէյա Պէտո-
ին։ 60 տարուայ վիճակի մէջ ամենի արիւծի պէս դիմա-
գրքաւելով քանի մը թշնամի նա գետին կը փռէ և
երբ այլ եւս վառօդ չունենար, սուսերամբէկ կը յար-
ձակի և աջ ու ձախ հնձելով կը յառաջանայ։ Բայց թըշ-
նամու բազմութիւ հարուածներէն վերջապէս այդ արիւծն
ալ յերկիր կիյնայ։ . . . Կորան դիւցազն քաջեր, կորան
Սամնոյ առիւծներ։ . . . Թող լան հայ եղբայր, թող կոծեն
քոյրք ու մարք, եւ թող ինկածներու յիշատակն անկեղծ
մնայ հայ ուրուներին։ Աւերակէս չենք երկարեր այդ ա-
ղէխարշ պատմութիւնն։ Կը թողում Սամնոյ շրջակայ գաւառաց
Խուլբի, Խիյանի եւ Փսանաց գաւառները իրենց անտա-
նելի կացութեան եւ օրհասի մէջ։ Եւ կըսեմ Միհրան
Տամատեանի հետ։—

«Որոք լալիւն, որք զրկելոյ,
Բանտարկելոյ դառն հառաչանք,
Առեւանգ քերց, ճիւղ լաց ու կոծ,
Որդեկորոյս մարց պաղատանք,
Զաշխարհ բռնեք,— ան խուլ, Հայեր,
Չեք խիղճ արդեօք ձեզ չի՞ տանջեր։ . . .
ԴԺՈՒԲ.

ԻՍԼՈՒՄՈՅ, ՊԴՆԱԺԱՐԸ

Երբ փոթորիկ յայտարար առաջին շանթն Սամնոյ
լեռներէն շառաչեց, Մուշ եւ դաշտն եւս սկսեցին հե-
ծել։ Նախ ճէպ Կոնցի համարիէ հեծելագունդն յար-
ձակելով դաշտի արեւմտեան հիւսիսային մասի Պաղ-
լու հայաբնակ գիւղի վրայ, կսպանեն յաւաքի կեան
Կարապետ անուն երիտասարդն եւ գիւղի ամբողջ
տաւարները աւարի կառնուն։ Մի քանի օր անցնելէ
վերջ կը յարձակին Մեղրի եւ Զիարէթ գեղե-
րու վրայ։ Հայք կը դիմադրեն, գետին կը թաւալն թիւրք
հեծեալ մը։ Հայք ետեւներէն երթալով երկու հօացան
կը խլեն փախող քիւրդերը կորագլուխ յետս կը դառ-
նան, եւ կը պատմեն իրենց պարտութիւնը։ Քուրդը կա-
տաղած յարձակում կը գործեն նոյն գեղերու վրայ և գը-
րթէ աւերակ ու բնաջինջ կը դարձնեն։ . . .

Երբ տաճիկ կառարութեան վարենի կիօքն չը յա-
գեցաւ Սասունցոց արիւնով, իւր ուշադրութիւնը դար-
ձուց Մշոյ դաշտի սիրտն ու հոգին լեռնաստորոտ գե-
ղերը, որք Սամնոյ հետ կից լինելով՝ վերջին չորս տար-
ւայ ընթացքին մէջ կառավարութեան խժդժութեանց
կեդրոն դարձած էին։ Արեւելեան մասի վրայ Բեքդադի,
Առաղ, Հաւատօրիկ, Գեքեւանք եւ Ալ-
ուառիւն գեղերը, իսկ արեւմտեան մասի վրայ Ղը-
ղըլաղաձ, Գոմբը, Տատրաբոմ, Բարձոթ, Խո-
րոնք, Գալախօլի եւ Պշեղ գեղերը այժմ պա-
շարման վիճակի մէջ լինելով՝ բնաւ ժամանակ ու մի-
ջոց ունեցած չեն նոյն իսկ իրենց արտերը հնձելու։
Սովէն հայերը բնաջինջ ընելը բաւական չը համարելով
զօրքեր լեցուցած են ձմերելու համար։ Արդեօք ինչ
կը լինի այն ընտանիքի կեանքն ուր Մուհամմէտի զա-
ւակն կը պղծէ նրա տան սեամն։ . . . Այս անտանելի դը-
րութեան չը առկալով, Տատրաբոմ գեղացիք դիմա-
դրած են եւ ի կորուստ մատնուելով, այսօր նոցա տեղը
քոյրք բնակեցուցած են։ Նշնպէս Գոմբը գիւղը ա-
ւերակ դարձած է։ Այժմ կըսպառնան նշանաւոր Ղը-
ղըլաղաձ 150 տունէ բաղկացեալ հայ գիւղին և ընդ-
հանրապէս միւս գիւղերուն եւս։ Սոցա աւերման գլխա-
ւոր պատճառն այն է, որ ունեցած են յարաբերու-
թիւն Սասունցիների հետ, եւ արդէն կառավարութեան
ուշքն ու միտքն է սոյն գեղերը քանդել։ . . . Այսօր
ամբողջ Մշոյ, Տարօնոյ եւ շրջակայից հայ հասարակու-
թիւնը կը հեծէ օրհասական ճգնաժամի մէջ։ . . .

ԴԺՈՒԲ.

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԵՈՑ ԳՆԱԺՈՒ

ՄՈՒՇ՝ Բաղիշոյ նահանգի գլխաւոր գաւառն է
շրջապատուած հեռեւեալ գաւառակներէ։— Խնուս՝ հիւ-
սիս, Պուլանդ և Մանազկերտ՝ հիւսիս-արեւելք, Ախ-
լաթ՝ արեւելք, Բաղէշ, Մոսկան, Խոյթ և Բոնաշէն՝ հա-
րաւ-արեւելք, Սասուն (Հատախ, Խիյան, Խարզան)՝ հա-
րաւ, Խուլբ, հարաւ-արեւմուտք, Կինձ և Ճապաղուր՝
արեւմուտք, Վարդոյ՝ հիւսիս-արեւմուտք։
Կանոնաւոր վիճակագրութիւն չը գտնուելուն պատ-

ճառով՝ Մշոյ գաւառի ճիշդ թիւը յայտնի չէ. հաւանական հաշիւը հետեւեալը կը համարենք, զոր կարելիին չափ խնամով եւ անկողմնակալութեամբ ենք պատրաստած. —

Մուշ քաղաք՝ հայեր 12,000, քիւրդ (եւ թիւրք) 13,000. — գումար 25,000: Մշոյ դաշտ՝ հայեր 50,000, քիւրդ 4,000. — գումար 54,000. Ընդհանուր գումար 79,000: Սասունը կը բաժանուի ութ գաւառակների, որոնցմէ Բոնաշէն ունի մնակիչ հայեր՝ 1,200, քիւրդ՝ նոյնչափ, Խոյթ՝ հայեր՝ 3,000, քիւրդ՝ նոյնչափ, Շատախ միայն հայեր կան, թւով 2,500, բուն Սասուն եւ Խարդան՝ հայեր 9,000, քուրդ՝ 10,000, փսանք՝ հայեր՝ 2,500, քիւրդ 800, Խիյանք՝ հայեր՝ 7,000, քիւրդ՝ 3,500, Խուլք՝ հայեր՝ 5000, քիւրդ՝ 12,000. գումար հայերի 30,200. գումար քիւրդերի 30,500. Ընդհանուր գումար 60,700: Այդ ընդհանուրը կը կազմուի հետեւեալ կերպով. հայերի թիւն է Մշոյ քաղաք՝ 12,000, Մշոյ դաշտ՝ 50,000, Սասուն՝ 30,200. գումար հայերի 92,200. իսկ քիւրդերը՝ Մշոյ քաղաք 13,000 (թիւրքախան), Մշոյ դաշտ՝ 4,000, Սասուն՝ 30,500. գումար քիւրդերի 47,500. Ընդհանուր գումար հայերի եւ քիւրդերի 139,700:

ՄՇԱՅ ԴԱՇՏԻ գլխաւոր գեղերն են.

1. Մշոյ արեւմտեան կողմ. — Գառնի, Զրեկ, Գոմեր (որոյ մօտն է Եղեղուտի ս. Զովհաննու վանքը), Փիթար, Խորոնք, Քարծոր, Փողոկով, Ղըզըւղաձ, Շէխլան, Աւզաղբիւր, Քուրդմէյտան, Արգիսնք, Արնձնուտ, Ուռուղ, Զաղու, Զիարէթ (որոյ մօտն է ս. Կարապետ կամ Իննակնեան վանքը), Կուարս, Բաղու, Սորտար, Մեղտի, Խէյպեան:

2. Մշոյ հիւսիսային կողմ. — Ծափնա, Առինձվանք, Առինձ, Խոփեր, Բըլեց, Սուլուխ, Գոմա, Խաշխալտախ, Հերկերտ, Աւան, Տէրըզ (Աշտիշատ), Ծիւսանու, Կուրաղու (որոյ մօտն է Մատնաւանք), Արդերդ, Աղան, Ալիձան, Շէխուսուֆ, Շէխպէտ, Զրոնք, Ապլէպահար, Խարթոց, Գանիկ, Օրկնոց, Քրդագոմ:

3. Մշոյ արեւելեան կողմ. — Մոկունք, Տերգեւանք, Հաւատորիկ, Մառնիկ, Առաղ (որոյ մօտն է Առաքելոց վանքը), Բերգակ, Ալիզունան, Սոխգոմ, Օղունք, Զունան, Նորչէն, Առուառինչ, Խասգեղ, Շմակ, Պնտիններ, Քօլսիկ, Էրիշտէր, Ծղակ, Վարդխաղ, Արգավանք, Արագ, Ուշտամ, Ծոգետ, Խւներ, Ազուտ, Ալիգլիօն, Մկրագոմ, Թիւ Հաքիկ, Իրիզակ, Աւզաղբիւր, Գրմերտ, Վարդենիս, Արտօք, Խարձ, Առն/ստ, Մուշեղչէն, Աղբենի:

ՍԱՍՈՆՑ գաւառակներն հետեւեալներն են.

1. Շատախ. — Մշոյ հարաւակողմը փոքր ինչ գէպի արեւելք, զուտ հայաբնակ, որոյ գլխաւոր գեղերն են. Շուշնամերկ, Գեղաշէն, Տափըզ, Իրիցանք, Քոփ, Կերմաւ:

2. Վերին գաւառ. — Մշոյ հարաւակողմը գուտ հայաբնակ, որոց գեղերն են. Շէնիկ, Սէմալ, Կէլիկիւզէն, որք այս տարի (92 թ.) նշանաւոր հանգիստացան: Ս. Յովհաննէս, Գեղ, Տատրագոմ (քրդեր):

3. Բուն Սասուն. — Շատախի հարաւային կողմը, ուր կը բնակին հայոց հետ Սասունցի քրդեր. գլխաւոր գեղերն են. Աղբիկ, Հիթինի, Խոնձվանք (քրդախան), Արբիկ, Հարկորք (քրդախան), Քրդամանք, Պղզըբան (քրդաբնակ), Ճախրակ եւ Քաղքիկ (քրդաբնակ), Բուի (քրդախան), Կապածգիտ եւ Ճիւլէնք (քրդաբնակ), Հաւձօնք, Մաղէնք, Բրդունք, Քաշքէնք, Խան:

4. Խարդան. — Բուն Սասոյ արեւելեան կողմը, ուր կը բնակին հայոց հետ Պէլէքցի քրդեր. գլխաւոր գեղերն են. Խասորի (քրդախան), Վարդենոց, Կորդեր, Շնխեղդ (քրդաբնակ), Մանչկուտ (քրդաբնակ), Շիկալէնք, Արծուիկ, Ռշնիկ (քրդաբնակ), Խուճարէնք, Դալարձոր (խան), Կէտկից (խան), Զաղտ (խան), Պատըմուտ (խան), Հաթնը (խան), Ճէլալէք (խան), Չորիկ (խան), Հոււտ, Փիրշէնք, Թըշը, Տնիւտ, Առուտոց (խան), Չորաղբի (խան), Կոչակ, Կուսգետ, Արբու, Նասորի (խան), Հով (խան), Կող (խան), եւ այլն:

5. Փսանաց գաւառ. — Բուն Սասոյ հարաւակողմը, զրեթէ զուտ հայաբնակ. գլխաւոր գեղերն են. Գոմք (Մատեն Առաքեալ վանից քով), Պէլսենք, Զրդնիկ, Մշգեղ, Խնձորիկ, Դալհոր, Թարուք, փսանք (աւերակ), Քաջուէնք, Միթէնք, Մարսթու, Թաճպատրիկ, Խապլձօշ (մեծամասնութիւն քուրդ), Շէխեր (քուրդ), Նորգեղ, Պէլաւ: (Սոյն գաւառակի Խնձորիկ եւ Մշգեղ գեղերն նշանաւոր հանգիստացան, քանիցս յետս մղելով օսմանեան ղորքերը):

6. Խիյանք. — Փսանաց գաւառի եւ բուն Սասոյ երեւմտեան կողմը, ուր կը բնակին հայոց հետ Խիյանցի քուրդեր. ՏԱՍՈՐԻԿ ուր տալան գեղերէ բաղկացեալ. համայնք մը է, աւելիս կառավարութենէ՝ որուն 20 տարիէ ի վեր մերժած է հարկ վճարել: (Տալարիկի գեղերն կամ թաղերն են, բուն Տալարիկ, Հարթք, Զօնուտ, Փուրխ, Գուալէնք, Հաքմանք, Հըղինք, Խլհոյիտ, Միղանք, Խղկարտ. սոքա բոլորը մէկտեղ 150 տուն են), Պերմ (120 տուն, կարծիք հայերէ բաղկացեալ հօգաւոր գեղ է), Բաքի, Արխունտ, Արսըք, Փարկա, Կրէմօրէ, Կրէխօթէ (խան), Պահմայ (խան), Սաղաւն, Հեղին, Ընկուղնաչ, Արտկունք, Սեւիտ, Իշինձոր:

7. Խուլի. — Մշոյ հարաւային արեւմտեան կողմը, ուր կը բնակին հայոց հետ Բատըբանցի եւ Հաւերտանցի քիւրդերը. գլխաւոր հայաբնակ գեղերն են. Կէլիկեանման, Կէլիէմուր, Գեղուվան, Ահարօնք, Ընձբար, Էհուփ, Շողէք:

8. Բուն աշէն. — Մշոյ հարաւային արեւելեան կողմը, ուր կը բնակին հայոց հետ Պէլէքցի քրդեր, մաս մը ալ Մահապանցիք, որք ցեղով Սասունցի քրդեր են. այս գաւառակին մէջն է ս. Աղբիկի վանքը. գլխաւոր գեղերն են. Զօնուտ, Կժանք (խան), Մահապանք (քրդաբնակ), Ընկուղիկ, Բըրիկ (քրդաբնակ), Արսըք (խան), Մղբէ (խան), Զօշթափ (քրդաբնակ), Կոսդ (խան), Շնեստ (խան), Շիւլ-Մղբէ (քրդաբնակ), Պրկանք, Հնտըձոր (խան), Տաշտամիրան (խան), Զօրավիդ, Տաշտատիէն (խան), Արինօք (քրդաբնակ), Քնոգ (քրդաբնակ), Շամիան (քրդաբնակ):

9. Խուլթ. — Բոնաշէնի արեւելեան կողմը, ուր կը բնակին հայոց հետ Պէլէքցի եւ Խուլթցի քրդեր. գլխաւոր հայաբնակ գեղերն են. Թաղվու, Թաղավանք, Լորտընձոր, Գիլօնք, Թաղվըձոր, Շնիստ, Շէն, Ագրակ, Փիճօնք, Սալապօս (խան), եւն, եւն:

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ եւ զրամ ու մօնդատ ուղարկել հետեւեալ հասցեով. —
Londres. (Angleterre). — M. Beniard. Poste restante.